



Լաբորատոր աշխատանք

ՄԱՐՄՆԻ ՇԱՐԺՄԱՆ ԱՐԱԳՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԻԱՆ ՉԱՓՈՒՄՆԵՐ ՕԳՆՈՒԹՅԱՄԲ

Աշխատանքի նպատակը: Որոշել շարժվող մարմնի միջին արագությունը:

Անհրաժեշտ նյութեր և սարքավորումներ: Վայրկենաչափ, չափերիզ, գնդակ:

Աշխատանքի ընթացքը: Որպես վայրկենաչափ կարելի է օգտագործել ինչպես մեխանիկական, այնպես էլ էլեկտրոնային ժամացույցի կամ հեռախոսի հնարավորությունները: Չափերիզով չափել որևէ L հեռավորություն դպրոցի բակում: Գնդակը գլորելնշված ճանապարհով և չափելանցման T ժամանակը:



Փորձը կրկնել մի քանի անգամ, գնդակը գլորելով տարբեր ուժով: Արդյունքները գրանցել աղյուսակում:

Երկարությունը	Ժամանակը
L=	T=
L=	T=
L=	T=

Արագությունը հաշվել $v = L/T$ բանաձևով: